

L.U. HAYRAPETYAN

**THE GRAMMATICAL FEATURES OF OBJECT-COMPLEX  
STRUCTURES IN POST-STALIN PERIOD PROSE**

There are numerous monographs in linguistics concerning subordinate component of the complex sentence, where authors given have studied this type of complex structure, exposed the existing grammatical patterns. The structure is studied, using examples from the post-Stalin period (50-60s).

**Keywords:** complex sentence, object clause, asyndetic connection, syndetic connection, syntax, intonational completeness.

ՀՏԴ 82-1:821.19

**Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ**

**ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼԻԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Դիտարկվում են Հովհաննես Փիլիկյանի եղեռնապատում պոեզիան, բանաստեղծական ազգային ինքնատիպ աշխարհը:

**Առանցքային բառեր.** Եղեռն, ազգային աղետ, հիշողություն, ազգապահպանություն, պատմական ճշմարտություն:

**Ներածություն:** Եղեռնը բազմակողմանի դրսևորում է ստանում հայ գրողների ստեղծագործություններում: Եղեռնի թեման չի սպառվում, հայը երբեք չի հաշտվում պատմական անարդարության հետ, այն միշտ թարմ է նրա հիշողության մեջ, չի հաշտվի այնքան ժամանակ, քանի որ չաշխարհի արդարամիտ մարդկությունը այն չի դատապարտել: Որքան էլ թուրքական կառավարությունը և որոշ երկրների ծախու գրչակները նենգափոխեն ցեղասպանության փաստը, այն հայերիս համար ապրած իրողություն է, արյամբ փոխանցվող ցավ: Հայ գրողները՝ օտարագիր թե հայագիր, հարազատ են մնում իրենց ազգային պատմությանն ու կենսական խնդիրներին, ձգտում ողջ աշխարհի մարդկությանը ցույց տալ բանական մարդու ուղեղում չտեղավորվող ահավոր չարիքը:

**Եղեռնի թեման Հովհաննես Փիլիկյանի պոեզիայում:** Հովհաննես Փիլիկյանն այն օտարագիր գրողներից է, որ անդրադարձել է եղեռնի թեմային: Իր բանաստեղծություններում և «1915-Հայկական մի համանվագ» պոեմում լայն համադրության մեջ փորձել է արտացոլել է եղեռնը և առաջին իսկ տողերով պարզել իր ելակետը:

**Ֆաշիզմն իմ գլխավոր թեման է,  
Իմ գլխավոր ոսոխը, թշնամին, ախոյանը, -  
Ժամանակից դո՛ւրս,  
Տարածությունից դո՛ւրս,-  
Այսինքն՝ ամե՛ն տեղ,  
Ամե՛ն ժամանակ անասնացած թուրքն է,  
Խիղճն ու հոգին սատանային հանձնած թուրքը [1]էջ26 :**

«1915- Հայկական համանվագը», - գրում է Քրսիտոֆեր Լոուրենը, - ցույց է տալիս ժամանակը՝ ընկալելով այն որպես ուղղահայաց մի մեծություն՝ երկարած գլոբ ու հարաբերական, անցյալն ու ապագան «ժամանակագուրկ» ներկայի մեջ պարփակող: Չպետք է մոռացության մատնվեն անցյալի անարդարությունները, և կարելի է կանխագուշակել, թե ինչ հետևանքների կարող են հանգել դրանք: Ժամանակը հնարավոր չէ անջատել մարդկային գործունեության ամբողջական շարժումից»[2]: Հովհաննես Փիլիկյանն իր ստեղծագործություններում խստագույնս քննադատել է եղեռնը, որը, ինչպես նշել է. «Հայերին խժռելու թուրքական բեթհովենյան սիմֆոնիա է» [1]: Գրողը ահասարսուռ պատկերներով փորձել է օտարալեզու հասարակությանը ներկայացնել դարի չարիքը:

**Բորենի թուրքը լլկեց մարմինը կույս աղջիկների,  
Բորենի թուրքը խոշտանգեց, այրեց սուրբ մասունքները հայ մամիկների,  
Հոշոտեց, լափեց հայ մամիկներին,  
Արյան գետեր էին հոսում պատմական Հայաստանում,  
Մոխրացած գյուղեր ու քաղաքներ էին պատմական Հայաստանում,  
Ավերված, թալանված տաճարներ ու կաճառներ էին պատմական  
Հայաստանում [1]էջ28:**

Նրա ստեղծագործություններում կրկնվող ու դաժան ճշմարտությունները հերթագայում են՝ ընդգծելով իրողության խելացնորության հասցնող ահավորությունը.

**... Պատմական Հայաստանում այլևս հայեր չկա՛ն,  
Արդեն «պատմական» Հայաստանում այլևս հայեր չկա՛ն,  
Արևմտյան Հայաստանում այլևս հայ չկա՛.  
Այլևս չկա՛.  
Ես հայ էի,  
Իսկ հիմա՞.-  
Ես, ինքս իմ մեջ այլևս չկա՛մ,  
Չկա՛մ... [1]էջ30**

Փիլիկյանն իր պրեզիայում բժախնդրորեն պատկերել է եղեռնի ահավոր հետևանքները, որոնք դեռ թարմ են, ականատես – վկա – վերապրողի զգացական աշխարհում: Գրողը մարդկությանը կանգնեցնում է համընդհանուր հարցադրումների առաջ, մղում պատմական փորձի արժևորման, բռնության ու բռնակալության նկատմամբ անզիջում ու անհաշտ պայքարի: Մարդկության դատին է հանձնում անցյալ ու ներկա իրողությունները, ահասարսուռ վտանգով լի իրադարձությունները՝ մղելով մտածելու և գործելու, թույլ տրված սխալն ուղղելու, նորերը կանխելու:

Հայը, որ արմատներով դարերով կպած էր իր երկրին, թուրքի չար ձեռքով և հզոր պետությունների անտարբեր հայացքի ներքո կորցրել է իր երկիրը, դարձել օտարերկրացի («Հայը»):

**Ես ծնվել եմ Նինվե՛ քաղաքում – Իրաք՛ում.**

**Դու ծնվել ես Ալեքսանդրիայո՛ւմ, Եգիպտոսո՛ւմ,  
Կալիֆորնիայո՛ւմ, ԱՄՆ-ո՛ւմ, Ավստրալիայո՛ւմ,  
Ջանգիբարո՛ւմ, Արգենտինայո՛ւմ, Հնդկաստանո՛ւմ...**

**Իսկ մեր հողե՛րը, մե՛րը, մեզանից խլվա՛ծը...**

**Ինչպե՛ս ես ստանանք մեր հողերը,**

**Մեր տունն ու տեղը, և ո՞վ կտա մեզ... [1] էջ33**

Նա երբեք չի հուսալքվել, միշտ իր արդար պահանջներն է ներկայացրել աշխարհին: Ժողովրդի մեջ անմեռ պահպանվող ոգին դիմանում է ժամանակին, տարածությանը, դժվարություններին: Ոչ ոք նրան չի կարող ընկճել, գնել, հայը իր հույսը միշտ իր վրա է դնում: Ուշագրավ է հայ տղակի բանավեճը մեծ մարդու հետ, որը, ինչպես ծանոթագրությամբ է բացահայտվում, «ամերիկյան զինվորական անձնավորություն է (հավանաբար նույն ինքն պրեզիդենտը՝ որպես ռազմական ուժերի գլխավոր հրամանատար)»[1, էջ36]: Այդ մեծ մարդու համար չկա պատմության արդար դատ, այլ կան իր բազաները, որոնք Թուրքլանդիայի այդ հողերում «պաշտպանում են ազատ քրիստոնեական աշխարհը համայնավարներից՝ անկրոն ու անհավատ ճամփորդներից...»: Այս կույր թշնամանքը կոծկում, լռության է մատնում կորսված հողերի ողբերգությունը, որտեղ այժմ «Մանկական ուրախ աչքերի փոխարեն՝ ռադարների արյունալի հայացքն է»: Բայց և ինչ էլ լինի, ինչպես էլ լինի, հայը չի կարող «պոկվել», «խլվել» իր հողերից («Արարատ»):

**Մենք սիրում ենք քեզ, հայրենի՛ երկիր.**

**Քո արգանդում կանգնած է մեր սարն Արարատ [1] էջ46:**

Դա սար չէ միայն, այլ մի ժողովրդի հավերժ գոյության խորհրդանիշ.  
«Թեկուզև չորս հարյուր տարի, հազար, հարյուր հազար էլ անցնի,- գրում է  
Փիլիկյանը,- հայը տերը կլինի իր երկրի և բիբլիական Արարատի ...»:

Հայոց մեծագույն ողբերգությունը դիտվում և բեկվում է լայն աղերսների  
մեջ: Բանաստեղծը մեկ առ մեկ ներկայացնում է դարի հրեշներին, նրանց  
գործած չարիքները («Ատում եմ»): Փիլիկյանը համոզված է՝ քանի դեռ եղեռնը չի  
դատապարտվել, նոր հրեշներ են ի հայտ գալու, նոր ավելի ահավոր չարիքներ  
են իրագործվելու.

**Երբ ես պատկերացնում եմ այդ ամե՛նը՝**

**Ես ատո՛ւմ եմ**

**Բոլո՛ր և ամե՛ն տեսակի ֆաշիզմները:**

**Կործանո՛ւմ է, ոչնչացնո՛ւմ, մա՛հ,. .**

**Միջուկային խարակի՛րի,**

**Մշտնջենական անե՛ծք է**

**Եվ դեմ է բնությանը, Աստծուն, Քրիստոսին, մարդուն...[1] էջ48**

Գրողը, դիմելով մարդկությանը, խնդրում է հնարավորինս արագ խելքի  
գալ, քանի դեռ աշխարհը հիմնահատակ չի կործանվել («Աղաչում եմ»):

**Աղաչո՛ւմ եմ ձեզ, մարդի՛կ, արթնացե՛ք,**

**Արթնացե՛ք, այս փոքրի՛կ հողագնդի սիրույն**

**Եվ մեր երեխաների՛ սիրույն,**

**Արթնացե՛ք,**

**Եվ չթողնեք, որ նա՛,**

**Կամ նա-յի նման մի նե՛,-**

**Մի նե՛ռ,**

**Հօդս, ցնդեցնի այս ամե՛նը,**

**Ամե՛նը...[1]էջ50**

Բանաստեղծը հաճախ ինքն իրեն հարց է տալիս՝ ի՞նչ է պատերազմը,  
ի՞նչ է խաղաղությունը, և գալիս է հետևյալ եզրահանգումների՝ «Պատերազմը  
գեղեցկությունների նկատմամբ ատելության գերագույն դրսևորումն է» [2]էջ16,  
«Խաղաղությունը գեղեցիկի նկատմամբ սիրո բարձրագույն դրսևորումն է» [2]  
էջ 17: Փիլիկյանը միանգամայն ճիշտ է նկատել. որ մարդկության հազարամյա  
պատմության մեջ այս երկուսը շաղկապված են իրար և փոխնիփոխ լրացնում  
են մեկմեկու, առաջ մղում կյանքը՝ այն դարձնելով կյանքի և մահվան շարունա-  
կական պայքար, որն իմաստավորում է կյանքը, նրան նորանոր լիցքեր հաղորդում:

**Եզրակացություն:** Հովհաննես Փիլիկյանի բանաստեղծությունները խտացնում են իմացական և ճանաչողական հարուստ նյութ բովանդակող պատմական խոշոր իրադարձություններ, որոնք գալիս են հաստատելու «բանաստեղծը մարդկության խղճի ծայնն է» [2, էջ 20] ճշմարտությունը:

Անգլիագիր գրողի պոեզիայում տիրապետողը տրամախոսություններով, արձակունակ պատումներով, վավերագրերով միաձուլված քնարականությունն է, որը ոչ միայն պարզում է հեղինակային կողմնորոշումը, այլև նրա զգացմունքային աշխարհը, որտեղ հորձանք են տալիս բողոքը, վիշտը, ցասումը, կարեկցանքը, նամանավանդ, հեզնանքը, որ խոցում է անայլայլ թվացող արտահայտության միջից:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գ. Էմին**, Գիրք թարգմանչությանց,- Երևան: «Սովետական գրող», 1984:
2. **Hovhannes Pelikian**, 1915, An Armenian Symphony and other poems. London, 1980.

#### А.П. КАРАГУЛЯН

#### ТЕМА ГЕНОЦИД АРМЯН И ПОЭЗИЯ ОГАННЕСА ПИЛИКЯНА

Рассматривается творческий самобытный национальный мир поэта Питера Балакяна и его поэзия о геноциде армянского народа.

**Ключевые слова:** геноцид, национальное бегство, память, сохранение нации, историческая правда.

#### Н.Р. KARAGULYAN

#### THE ARMENIAN GENOCIDE AND HOVHANNES POLIKIAN'S POETRY

Problems of preservation of the nation is always relevant in Armenian literature. Many of the Armenian diaspora writers, among them Hovhannes Pilikian, have addressed this problem. For all Armenian writers main national spirit, the relationship with their historical homeland.

**Keywords:** genocide, the national disaster situation, problems, memory, the preservation of the nation, historical truth.